



2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

VI.—Հաղթական դարձը

Կոմիտաս 1914 հուլիս 8/21-ին Պոլիս կը դառնար իսկապես ալ փառք քաղելի հետո հայ ժողովուրդին: Իր հաղթանակի լուրերը հասնել էին արդեն Պոլիս, և հետևաբար խուռն բազմություն մը ջերմությամբ դիմավորեց զայն Սիրքեճիի կայարանին մեջ:

Իր վերադարձին առթիվ կգրեինք Ազատամարտի մեջ.

«Մոտ երկուրուկես ամսվան բացակայութենե մը ետք Եվրոպայեն Պոլիս վերադարձավ երեկ Կոմիտաս վրդ.: Տաղանդավոր երաժշտագետը միջազգային համաժողովին մեջ իր այնքան կարևոր դերը ունենալիս և Փարիզի երաժշտական աշխարհին մեջ հայ հոգեվոր ու ժողովրդական երաժշտության հանդես մեծ հետաքրքրություն արթնացնելիս ետք, անցած էր Վիեննա: Հոն մտերմական հավաքովի մը առթիվ ծանոթացուցած է հայ երաժշտությունը՝ իր այնքան գեղեցիկ նմուշներով, և այդ առթիվ տեղվույն հայ գաղութին մեջ հայ դպրոց մը ունենալու գաղափարը արթնցուցած է: Վարդապետը Վիեննայի մեջ այցելած է նաև աշխարհահռչակ երաժշտագետ պրոֆ. Ադլերի, որ Փարիզի համաժողովին մեջ հայ երաժշտագետը ծափահարողներեն մեկը եղած էր: Կոմիտաս վարդապետ հանդիպած է նաև Ֆիլիպի, ուր տեղվույն գրասիրաց ընկերության օգտին դասախոսած է՝ նյութ ունենալով հայ հոգևոր և գեղջուկ երաժշտությունը: Բացի իրեն ի պատիվ տրված հացկերույթներե, Ֆիլիպիի մեջ

ստացած է ընծաներ տեղվույն զանազան կազմակերպությանց կողմե:

Կոմիտաս վրդ. Սիրքեճիի կայարանին մեջ ընդունվեցավ համակիրներու բազմության մը և իր երգչախումբի անդամներուն կողմե:

Մեր խմբագիրը երեկ իսկ հարգելի երաժշտագետին հետ տեսակցություն մը ունեցավ, զոր, իր շահեկանությանը պատճառով պիտի հրատարակենք մեր վաղվան թիվով»²⁷:

Այս տողերը գրողին վիճակվեցավ այդ բախտը: Ան կայարանեն շունչը ուղղակի Կոմիտասի բնակարանը առավ, ու իր հարցումներուն տարափը սկսավ առանց թույլ տալու որ պահ մը հանգչի հեգ վարդապետը:

«Շահեկան պիտի ըլլար Կոմիտաս վարդ. ի բերնեն իսկ լսել իր տեսությանց թողած տպավորությունը,—կրսնինք մեր տեսակցությունը պատմելու ատեն Ազատամարտի մեջ, հետևաբար, հազիվ Պոլիս հասած, գտանք զինքը և իրմե խնդրեցինք լուսաբանություններ իր կատարած գործին մասին: Իր սովորական ժպիտովն ու աշխուժովը, Կոմիտաս վարդապետ, հակառակ իր ճամբու հոգնությանց, հաճույքով պատասխանեց մեր հարցումներուն»²⁸: Հույնը, սերբը, բուլղարը կամ թուրքը, շունեին իրենց սեփական երաժշտությունը, հայ երաժշտության համար սակայն այսքան պատվաբեր տեղ մը կտրվեր, և մինչ ուրիշ ազգերու ներկայացուցիչ երաժշտագետներուն ճանքերը շատ անգամ բուռն դիտողություններով և քննադատություններով կընդունվեին,—ինչպես պատահեցավ

²⁷ «Ազատամարտ», 1914 հուլիս 9/22, թիվ 1556:

²⁸ Հայ երաժշտության հաղթանակը. տեսակցություն մը Կոմիտաս վարդապետի հետ. «Ազատամարտ», 1914 հուլիս 9/22, թիվ 1557:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի ԱՄ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի ԱՄ Ա-2-ից, Ը-Ժ-ից և 1967 թվականի ԱՄ Գ-2-ից:

կաթոլիկ կրոնավորի մը՝ որ Գրիգորյան երաժշտության շեշտավորության մասին կը խոսեր, — ընդհակառակը հայ երաժշտության մասին ըսված խոսքերը կատարյալ համակրողությամբ լավեցան, ու հայտնի երաժշտագետ Վազներ, որ նույն վարդապետին ամենեն բուռն ընդմիջողներն էին, համակրողության և շնորհավորության խոսքեր միայն ունեցավ ըսելիք մեր երաժշտության մասին: Հետաքրքրական էր նաև տեսնել երբ միջազգային վարպետներ, համաժողովին ավարտելն հետք, աղբյուրներ կփնտրեին հայ երաժշտության ավելի ևս ծանոթանալու համար, և երբ անոնցմե շատեր սկսան կիրակի օրեր հայոց եկեղեցին հաճախել՝ հայ եկեղեցական երաժշտությունը վայելելու համար: Ավելացնեմ որ Միջազգային երաժշտական ընկերության հառաչիկա համաժողովը՝ որ երեք տարի հետք, 1917-ին Բեռլինի մեջ պիտի գումարվի՝ կրկին տեղ պիտի տա հայ երաժշտության, և ես հրավիրված եմ խոսելու «Հայոց երգեցողության ձևին» մասին:

— Ինչ տպավորություն թողուցին, հարցուցինք նախ, ձեր հայտնած տեսությունները հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտության մասին:

— Նախ որ իմ հայտնած տեսություններս հայ հոգևոր և գեղըրդկ երաժշտության մասին՝ պատասխանեց Կոմիտաս՝ նորություն էին մանավանդ անոնց համար որոնք դեռ տարի մը առաջ կանգնուածային կամ կմերժեին հայ ինքնուրույն երաժշտության մը գոյությունը: Հետո, շատեր որ հայ երաժշտության մասին հարեանցի գաղափար մը միայն ունեին՝ դասախոսություններս հետք առաջինը եղան խոստովանող որ հայ երաժշտությունը գեղարվեստական բարձր արժեք մը կներկայացնեն, ավելի հարազատ քան ուրիշ շատ մը ժողովուրդներու մեջ, և ավելի վսեմ քան արևելյան ուրիշ ազգերու մոտ: Ու երաժշտական մեծ վարպետներ՝ երբ դասախոսություններս կավարտեի, չէին կրնար իրենց զարմանքն ու ապշությունը զսպել իրենց համար օտար այս երաժշտության ծանոթանալով, որ ոչ միայն նորություն էր իրենց համար, այլ նաև ապշեցուցիչ նորություն մը: Ինձ համար ալ շահեկան էր թե ի՞նչ պիտի ըլլար անոնց տպավորությունը երաժշտության մը մասին, զոր ցարդ իր հոգի նմուշներն դառնելով՝ կնկատեին իբրև մեղկ, տխուր, մեղամաղձոտ երաժշտություն մը, մինչ հայ երաժշտությունը ո՛չ միայն մեղկ ու տխուր էր, այլ համակ ուժ է և կենդանություն, ու իր մեջ կանուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, — որովհետև երաժշտությունը ամենն մաքուր հայելին է ցեղին, ամենն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայ-

տության մեջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը: Ուրախ եմ որ բոլոր այդ հայտնի վարպետները կրցան թափանցել, որքան հնար էր, հայ երաժշտության խորությանց, և բարձրաձայն հայտարարել անոր ուժն ու քնքշությունը չվարանելով նույնիսկ «աստվածային» կոչել զայն: Ու հայ երաժշտության արժարժած հետաքրքրությունը այնքան ընդհանուր էր համաժողովին մեջ որ նոր դասախոսություններ ալ խնդրեցին հայ երաժշտության մասին, ու ես ստիպվա՞ս աղա համաժողովին մեջ կարդալու երրորդ դասախոսություն մըն ալ՝ «Հայ երաժշտության տաղաչափության և շեշտավորության» մասին գոհացում տալու համար այդ հետաքրքրությունը:

— Ի՞նչ տպավորություն թողուցին, կը հարցնեմ, հայ խաղերու մասին ձեր երևան հանած նորությունները: Այն խաղերուն, կավելացնեմ, որոնք այնքան «խորհրդավոր» և «անոտի» հռչակվեցան պոլսահայ տիրացուներու կողմից:

— Հայկական խաղերու բանալիները, զորս երևան հանած էի տարիներու պրպտումներես հետք, մեծ նորություն մը եղան համաժողովին անդամներուն համար, որովհետև, հայկական խաղերով կարելի պիտի ըլլա ոչ միայն հայկական հին երաժշտությունը ուսումնասիրել, այլ նաև ուսումնասիրել ուրիշ ազգերու հին երաժշտությունները, ինչպես հունականը, որոնց մասին դժբախտաբար որևէ ուսումնասիրության աղբյուր գոյություն չուի այժմ, մինչ հայ ձեռագիրներ ավելի ավանդապահ գտնված են գուրգուրանքով պահելու համար հայկական հին երաժշտության աղբյուրները, որոնցմե թերևս երաժշտագետներ օգտվեն ժամանակակից ուրիշ երաժշտություններ պրպտելու համար: Թեև ուրիշ ազգերու հին երաժշտությունն նմուշներ հասած են մեզի, բայց ամենն ավելի հայ խաղերն են որ կներկայանան ամբողջական և ամփոփ, և ավելի լրիվ նյութ կներկայացնեն ուսումնասիրությանց համար: Ասկե զատ հայկական հին ձեռագիրներու մեջ կհանդիպինք հույն կամ ուրիշ հին երաժշտությանց վերաբերյալ թարգմանություններու, որոնց հունական կամ օտար բնագիրը կորսված ըլլալով, հայերեն թարգմանություններն են որ պիտի կարենան լույս սփռել ուսումնասիրությանց պահույն: Այս տեսակետով ալ, հայ խաղերու ուսումնասիրությունը իր մասնավոր կարևորությունը կստանա: Այս մասին գրած ուսումնասիրությունս պիտի հրատարակվի արդեն համաժողովին դիվանին կողմից, հետևաբար չեմ ուզեր ավելի երկար ծանրանալ այս մասին:

— Հայկական ինքնահատուկ նվագարաններու մասին ևս տեղեկություններ տվի՞ք համաժողովի անդամներուն:

— Այո՛, կպատասխանեմ Կոմիտաս, հայկական նվագարաններու մասին ևս խոսեցա համաժողովին մեջ, մասնավորապես ծանրանալով փողին շուրջ, զոր բացատրեցի իր ամբողջ կազմով և նաև հոգևոր ու գեղջուկ երգերն նմուշներ նվագելով անոր վրա: Պետք է ըսել որ ան ևս, ինչպես հայ երաժշտության մյուս առանձնահատկությունները, խոր տպավորություն գործեց ունկնդիրներուն վրա: Իմ կարծիքով, փողը մեր նվագական երաժշտության հիմնաքարն է, և ունի այն տեսակ առանձնահատկություններ, զորս ոչ մեկ ազգի նվագարան չունի: Անոր հնչումները ամենն են մոտիկն են մարդկային սրտին, ամենն հարազատ արտահայտիչ անոր բոլոր զգացումներուն. մարդ անոր պարզ ծակտիքներուն մեջ կրնա արտաբերել իր հոգին իր բոլոր զգացումներով: Եթե կատարելագործվի այս նվագը՝ իր զանազան սեռերով, ես վստահ եմ թե մենք այն տեսակ շնչական հրաշալի նվագուկ (orchestre) մը կունենանք որ ընդունակ է բնությունը արտահայտելու իր էական գույներով, կյանքը իր հարազատ շարժումներով, միտքը՝ իր սեփական խորհուրդներով, և սիրտը՝ իր իսկական հուզումներով, որովհետև փողը միակ նվագարանով կրնա բազմաթիվ ձայներու հնչումներ հանել, ինչ որ կարելի չէ գտնել ուրիշ նվագարաններու մեջ: Թեև համաժողովին բացատրեցի ուրիշ հայկական նվագարաններ ևս, ինչպես պարկապուղի կամ տկզարը, սակայն անոնք այնքան ինքնուրույն չեն որքան փողը, և անոնց մոտ կամ նման ուրիշ նվագարաններ կարելի է գտնել ուրիշ ժողովուրդներու մեջ. արդեն բոլոր ազգերն ալ իբրև ազգային նվագարան՝ մեկ գործիք մը միայն կունենան ընդհանրապես, իսկ մյուսները շինված կամ հորմարցված կըլլան անոր վրա: Հայոց մեջ այդ ազգային նվագարանը փողն է, որ, պետք է անգամ մըն ալ կրկնեմ, խորունկ ազդեցություն գործեց բոլոր համաժողովականներուն մեջ, իր պարզություն մեջ պարփակած վեհությամբ:

— Իսկ ի՞նչ պիտի ըսեիք, սիրելի վարպետ, այն վիվլուկներուն առթիվ զոր ցույց տվավ հոս տիրացուներու ճահիճը: Կակնարկեմ այն տխուր պայքարին, զոր պոլսահայ տիրացուներ՝ կրոնական ժողովին անիմաստ իրարարանցումն քաջալերված, բացին ձեզի դեմ, կրամոֆոնի ծանոթ խնդրույն առթիվ:

Վարդապետը՝ որ ցարդ խոսեր էր ոգևոր ու խանդավառ, կլռե հանկարծ, ու ես իր աչքերուն մեջ կկարդամ տարտամ դառնության մը զգացումը, զոր իզուր կշանա սքողել ինձմե: Ու կտեսնեմ որ այդ դառնությունը հե-

տրզհետե անտարբերության մը կփոխվի, երբ խոսք կառնե վարդապետը շարունակելու համար.

— Ես տարիներու աշխատանքով շինեմ եմ իմ ուղեգիրը, ուրկե ընթացեմ եմ ցարդ և պիտի ընթանամ ասկե ետք ալ որքան ատեն որ ուժ զգամ երակներուս մեջ. ոչ մեկ խոշոր-դոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելությանս մեջ, որուն նվիրականությանը համոզված եմ ես բոլոր սրտովս:

Կրկին կլռե վարդապետը, ու աս անգամ ես է որ կընդմիջեմ իր խորհրդավոր լռությունը.

— Իսկ ասկե ետք ի՞նչ ընելու մտադիր եք, վարդապետ:

— Շարունակել իմ ճամբաս, կըսե կտրուկ ու վճռական:

Ու ձեռքի խանդաղատագին սեղմումն մը ետք, կմեկնիմ քովեն:

...Մեր զրույցը վերջացած չէր դեռ երբ այցելուներով ողողվեցավ սենյակը. իր սաները, իր մտերիմները, իր «քերթները»-ները կըխոժեին անընդհատ, պահ մը հանգիստ չտալով խեղճ վարդապետին:

Կոմիտասի տունը ուխտատեղի մը մնաց դեռ շատ մը օրեր: Ու վարդապետը խոնջանքը մոռցավ իր ժողովուրդի գուրգուրանքին մեջ:

VII.—Փոթորիկն առաջ

Փոթորիկը չէինք նախզգար տակավին:

Բոլորը համակված էին դեռ անբացատրելի լավատեսությամբ մը, ու ոչ ոք չէր դիտեր շուրջը՝ որպեսզի տեսնե թուրքին նայվածքը, որ երթալով կխոժոռեր:

Ամենուն աչքերը հառած էին հայոց աշխարհին, որ պետք է ծաղկեր շուտով դարերով հեծել և հեծեծել հետո:

Ամբողջ վեց տարի հայրենիք էինք կանչեր օտար ափերու վրա թափառող հայ պանդուխտները: Հավատացե՛ր էինք որ Հուրիեթին հետ դրախտ պիտի դառնա հայոց աշխարհը: Ծիշտ է՝ պահ մը հուսախաբությունը պաշարեր էր մեզ երբ տեսեր էինք թե կեղծ է այդ Հուրիեթը: Բայց հիմա դարձյալ մեր հույսերը բոցավառե՛ր էին, ու դարիբները հայրենիք կկանչեին նորեն:

Ու իրավ ալ պանդուխտները անսացին մեր կոչերուն: Խումբ-խումբ սկսան հայրենիք դառնալ անոնք ևս խաբված մեզ նման: Ամեն շոգենալ որ կու գար Պոլիս՝ խումբ մը հայ կերերբ հետը:

Բանանք այն օրերու թերթերն մեկը:

«Առջի օր, 2/15 հունիս, Մարսելիայեն Պոլիս հասան դարձյալ նոր պանդուխտներ Ամերիկայեն, թիվով 30 հոգի, հայկական գավառները մեկնելու համար», կկարդանք, օրինակ, «Ազատամարտ»-ի մեջ:

Անոնցմե ոչ մեկուն մտքն կանցներ թե շուտով պիտի չբանային հայկական այն գավառները:

Աղետները, կրսն, իրենց կբաշեն երբեմն իրենց զոհերը:

Այդպես եղավ նաև այս անգամ: Արտասահման էին, 1914-ի այդ ամռան, շատերը մեր մտավորականներն: Անոնցմե ոմանք, ինչպես Խաթակ, Սիամանթո, Բարսեղ Շահպազ, վաղեցիկ շուտ մը Պոլիս դարձան: Իրենց ոտքովը եկան դահլիճին գիրկը:

Տուն վաղեց նաև Կոմիտաս: Խանդավառությունը՝ զոր Փարիզի իր վերջին առաքելությունը լեցուցեր էր իր մեջ՝ հանգիստ չէր տրված իրեն: Զայն փութացուցեր էր Պոլիս՝ որպեսզի զայն լծե նոր առաքելության մը: Գործեր կային նաև Եվրոպայի մեջ բայց ան նախընտրեց Պոլիս դառնալ, հազիվ քանի մը օր կանգ առնելու հետո Վիեննայի և Ֆիլիպիի մեջ:

1914 հունիս 22-ին Փարիզեն կգրեր Պոլիս՝ Արմինե Մելիքյանին և Նազենի Գեյնճյանին.

«Թեև համաժողովը լրացավ, բայց ընտրվեցա ժողովրդագրական բաժնի այն մասնաժողովը շորս անդամներից մեկը, որո պարտականությունն է մեկ միատեսակ ծրագիր մշակել՝ առհասարակ ժողովրդական երաժշտությունն ուսումնասիրելու և այնպես, որ բոլորը կարենան օգտվիլ՝ առանց դժվարությունաց: Առայժմ այդ գործով եմ զբաղվում:

Անգղիային պիտի կանչեն եղբր, որ հայերի համար մեր երաժշտության մասին դասախոսեմ: Երեկ ևս մի հարուստ ֆրանսիացի Մարսելյեն եկավ, այցելեց և խնդրեց որ նույն քաղաքին մեջ դասախոսություն մը կատարեմ հայ երաժշտության մասին ընտիր հասարակության առջև. հանձն առա, եթե հարմարի ու գրպանս օգտե:

...Ուրեմն, եթե այսպես դասախոսութենե դասախոսություն հրավեր ստանամ՝ Կ. Պոլիս գալս մի քանի շաբաթ ևս պիտի ուշանամ²⁹:

Այն ի վերջո չպատասխանեց սակայն ոչ մեկ հրավերի և վաղեց Պոլիս:

Փարիզեն դարձին Կոմիտաս միևնույն ոգեվորության մեջ գտեր էր Պոլիսը: Ավելին. այդ ոգևորությունը ավելի ևս աճեց էր, ու իր լրման հասեր՝ երբ նշանակվեց էին Եվրոպայի զուլգ մարզպանները որոնք պիտի երթային հսկելու յոթը նահանգներու մեջ ծրագրված բարենորոգումներուն:

Արդարև՝ Բ. Դուռը ապրիլի մեջ դիմեր էր վեց պետությանց դեսպաններուն խնդրելով «իրենց բարեհաճ աջակցությունը ընծայել հայկական երկու երկրամասերու համար երկու քննիչներու ընտրության մեջ», ու պետությունները, խորհրդակցելով իրենք իրենց միջև, նշանակեցին այդ քննիչները հանձին հոլանդացի Վեստենենկի, որ նախապես ընդհանուր նահանգապետ եղած էր հոլանդական Կոնգոյի, և դանիացի Հոֆի, որ գնդապետ էր դանիական բանակին մեջ: Վեստենենկ կեղրոն պիտի ունենար Կարինը ու պիտի հսկեր Կարնո, Սեբաստիո և Տրապիզոնի կուսակալություններուն վրա, իսկ Հոֆ պիտի նստեր Վան և պիտի վարեր Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի և Խարբերդի նահանգները: Անոնք ժամանեցին շուտով Պոլիս, անմիջապես գործի անցնելու համար:

Մեծ էր ոգևորությունը հայության բոլոր խավերուն մեջ երբ երկու ընդհանուր քննիչները Պոլիս հասան: «Հայաստանի մարզպաններ» սկսանք կոչել՝ զանոնք նույնիսկ մեր թերթերու մեջ, և մեր խանդավառությունը զանոնք հայացուց անունով ալ, — «Իշխան օստանիկ» և «Իշխան Հովյան» անվանելով զանոնք: Մեր հույսերը ավելի ևս աճեցան, երբ իրենց պաշտոնական շփումներեն հետո Բարձրագույն Դռն հետ, շփման մեջ մտան հայ շրջանակներու հետ ալ: Անոնք մայիս 9-ին (ապրիլ 26) այցելեցին հայոց պատրիարքարան, և ամրապնդեցին մեր լավատեսությունը:

Ավելացնենք որ Կոմիտաս ևս ձեռնածալ նստած չէր: Կրկին գլուխն անցած էր խումբին, Փարիզեն վերադարձն անմիջապես հետո, Բերայի հայ Ավետարանական ս. Երրորդություն եկեղեցիին մեջ իր համերգը կու տար, որ պիտի ըլլար, ավաղ, վերջինը:

Հայությունը, անդին, կշարունակեր եռալ:

Հայկական Ողիմպիականը՝ որ տեղի կունենար 1914 հունիս 14/27-ին՝ մեկն էր հայ երիտասարդության վերջին բունկումներեն մեծ Եղեռնեն առաջ: Ոգևորությունը մյուս տարիներեն ավելի էր, և մարզիկներուն թիվը ավելի ստվար: Այս անգամ գավառն ալ բերեր էր իր մասնակցությունը, ու ղրկեր էր իր մարզիկները:

Վերջին քանի մը տարիներուն պես՝ այդ մասն ևս պարտիզակ կխայտար Պոլսեն հոն համախափվող հայ մտավորականության ներկայությամբ: Այդ տարին հոն էր որ կրասարքեր Հայ Ուսուցչական Միությունը իր մանկավարժական դասընթացքը, ոգևորությունը ավելի ևս արժարծելով գլուղին մեջ: Դասընթացքը կբացվեր հուլիս 15/28-ին, ճիշտ այն օրը, երբ աշխարհ կսկսեր բռնկիլ անդին:

²⁹ Ռոբերտ Աբայան, Կոմիտասի 1914—1916 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1965, թիվ 13:

Այդ օրերուն զնդապետ Հոֆ հասած էր արդեն Վասպուրական, և իր քննական պտույտը կատարելով՝ ժամանած էր հայկական հարավային նահանգները, ողջունված եկեղեցիներու զանգակներուն հրճվալից դողանքներով և ժողովուրդի խելահեղ ցնծության մեջ, իսկ Վեստենենկ կատարաստվել Կարին մեկնելի իր շքախումբին և աշխատակիցներուն հետ, երբ ահա հենց ռազմի շեփորը:

VIII.—Մինչ դաճի՞ր դուռը կապասե

Կմտնենք արդեն զարհուրելի շաբաթը: Երկուշաբթին որ մեղ կբացվի՝ ապրիլ 6/19-ին՝ ահավոր էջ մը կբանա ամեն մեկուս կյանքին մեջ: Այդ օրը փակվել էր առաջին քառորդ դարը յա տողերը գրողի կյանքին՝ տառապանքով թրծված տարիներու հետ, որոնք վերջ էին գտել 1908 հուլիսին՝ Համիդին մեղ շնորհած ազատության օրերուն, հուլյսերու և ցնորքներու շրջան մը ապրեցնելով մեզ հետո ամբողջ յոթը տարի: Պատմության կհանձնեինք այդ յոթը տարին ալ հիմա՝ զգալով արդեն որ դժնդակ օրեր կապասեն մեր դուռններուն տակ:

Զգիտեմ ինչպես անցավ այդ երկուշաբթին: Բայց գիտեմ որ պահ մը խաղաղ շնորհույց ան մեր հոգին, ու հաջորդ գիշերն ալ հետը:

Երեքշաբթի արդեն գիտեինք որ ճիվաղը կմտնենա մեր դուռներուն: Լուրերը որ մեզ հասեր էին այդ օրը վստահելի մեր աղբյուրներեն՝ մեղ համակեր էին տարօրինակ ջղայնության մը զոր մարդ կզգա աղետահա առաջ: Կզգայինք որ փրկության այլևս ոչ մեկ հույս մնացեր էր, մանավանդ այն եղբրական զավեշտեն հետո զոր մեր «ազատարարները» խաղացեր էին Դարդանելի առջև: Մարեր էին հույսի վերջին կայծերը մեր հոգիներուն մեջ, ու սոսկումով կնայեինք թուրքին աչքերուն որոնք հիմա ավելի դաժան էին դարձած՝ Դարդանելի օրերուն իրենց զգացած սարսափը թոթափելի հետո:

Զգուշության վերջին փորձերը զորս այդ օրվան դժնդակ լուրերը մեզ կհարկադրեին՝ ի՞նչ արժեք կրնային ունենալ սակայն, երբ կզգայինք որ թակարդն ենք արդեն բոլորս ալ: Մեր բնակարանները փոխելով մեր հետքերը կորսնցնել մեր մեջ վերջին հուսահատ փորձը պիտի ըլլար, ու, ավա՜ղ, շատերը թերացան այդ զգուշության մեջ ալ, անփութության մը զոր մարդ կունենա անխուսափելի աղետին առջև: Այնուամենայնիվ մոտալուտ վտանգին մասին տեղյակ պահեցինք բոլորը որոնք կրնային առաջին զոհերն ըլլալ թուրք մոլեգնության:

Ինձ էր վիճակված Կոմիտասին ևս հաղորդել սև շշուկները, ու մինչև այսօր ալ սարսուռով կհիշեմ սառնասրտությունը զոր ան

ցույց կու տար զանոնք իմացած ատեն: Օրը օրին տեղյակ կպահեի զայն մեր ստացած լուրերուն, ու ան կարծես թե չէր ազդվել իրեն պատմածներես որքան ալ մտահոգիչ ըլլային անոնք: Ան ոչ մեկ վայրկյան չհեռացավ աշխատանքի սեղանեն:

Նախան Սանուց Միությունը, զոր այդ օրերուն կվարեի, նախաձեռնությունն ուղեց ստանձնել ցերեկույթի մը՝ որուն հասույթը կուզեր հատկացնել վիրավոր թուրք զինվորներուն: Պահու մը, երբ թուրքը ակոս կկրճուտեր հայուն դեմ, ամեն մեկս կփորձեինք պատրվակ մը ստեղծել հայ տարրին բարեհուսության ապացույցը տալու համար: Գիտեինք որ նման ժեստերով անկարելի էր քնացնել դահիճներուն ներսը ծվարած օձը, և այնուամենայնիվ միշտ ալ փորձեցինք այդ անկարելին:

Կոմիտասը, որուն դիմեր էի, սիրով խոստացած էր իր մասնակցությունը: Ցերեկույթը պիտի սարքեինք Թեթևիայի մեջ, որ իտալական սրահ էր, և Իտալիա դեռ հարած չէր դաշնակիցներուն:

Մղձավանջի այդ օրերուն մեջ զորս շարաշուք շաբաթը բերած էր մեզի, այլևս սիրտ չունեինք ոչ ալ քաջություն՝ այդ հանդեսը սարքելու: Ավելի ճիշտ վախցանք հայություն համախմբելու որևէ տեղ այդպիսի մոայլ պահու մը, երբ մարդ չէր գիտեր թե ինչպես իրկուն պիտի ըլլա օրը, կամ գիշերը ինչպես պիտի լուսանա:

Գացի Կոմիտասին ալ իմացնել այդ օրը՝ թե հետաձգած ենք հանդեսը:

— Լավ եք ըրեր, միմիջեց, ու ա՛լ ուրիշ խոսք չըրավ:

Օրերը որ հաջորդեցին թաթավված էին կասկածով ու երկյուղով: Ամենուն նայվածքին մեջ հուսահատ բան մը կար, բայց ոչ ոք կհամարձակեր սիրտ տալ քովինին: Իրարու հետ գրեթե փսփսուելով կխոսեինք, կամ հազիվ բարև առած-տված կբաժնվեինք իրարմե:

Կասկածելի մարդոցմով լեցուն էին փողոցները, ամեն մեկուն աչքը հառած քովեն անցնողին:

Այսպես անցան չորեքշաբթին, հինգշաբթին:

Ազգային իշխանությունները կշարունակեին իրենք ևս շփոթած մնալ ամեն կողմի հասնող վրդովիչ լուրերուն՝ առջև: Զավեն պատրիարք 1915 ապրիլ 10/23-ին իր մոտ խորհրդակցության կանչեր էր հայ երեսփոխաններն ու ծերակուտականները՝ դարման մը խորհելու համար այն դժնդակ կացության՝ որուն լուրերը կհասնեին գավառներեն, մասնավորապես Կեսարիո, Մուշի, Բաղեշի, Վանի, Տեոթեոլի, Զեյթունի շրջաններեն: Ներկա են Զոհրապ, Վարդգես, Զարեհ Տիլ-

պեր, և դեռ քանի մը ուրիշներ խորհրդարանի հայ անդամներն, բայց ոչ բոլորը: Թուրքին գարշապարեն շատովող երեսփոխաններ և ծերակուտականներ ալ ունինք, որոնք վախճած են գալու: Հուսահատ եղած են բոլոր ներկաները իրենց արտահայտութեանց մեջ. ու ի՞նչ կորոշե հուսահատ մարդը. երթալ ոտն ինչալ իր տիրոջը, ու պաղատիլ որ գոնե կյանքը խնայե: Այդպես կորոշեն Պատրիարքըն ու իր խորհրդականները ազատելու համար դավաոր իր ճգնաժամեն: Ու ոչ ոք դեռ կենսիզգաթ թե ճիշտ այդ պահուն ճիշտապէս իր վերջին պատրաստութիւնները կտեսնեն անդին, իր զոհերը հավաքել և առաջ իրենց տուններն:

Նախատունակն է Կարմիր Հունձքին:

* *

Կոմիտասը վերջին անգամ կտեսնեմ ճիշտ այդ հունձքի առտուն, կանուխեն:

Այդ շարաշուք առտուն սապես սկսած եմ պատմել անգամ մը.

«Ամբողջ գիշերը մղձավանջով կանցընեմ: Չար-շար պատկերներ կխռովեն քունս: Արդեն քանի մը գիշերե ի վեր կորսնցուցած եմ հոգիիս խաղաղութիւնը ու կասկածներով միտքս կլկեմ: Ի՞նչ պիտի ըլլա վաղը. ի՞նչ պիտի պատահի այս գիշեր իսկ չլուցած: Փոթորիկը կու գա. կնախզգամ վաղուց է. բայց ե՞րբ պիտի պայթի ան... ու ամեն վայրկյան կզգամ որ ան մեզի կուգա...»:

Չեմ հիշեր այնքան սարսուռ որքան այդ առտվանը, երբ դուրս. կենտրոն տունն հոգիս փոթորկած:

Պողոտա կելեմ շտապով, հանդիպելու նախ մեր վստահելի տղուն՝ որ կծառայէ Բյուրքճյան դեղարանի մեջ. ան ալ անձկութեամբ կսպասէ ինծի, հուզված, շփոթած. իր վիճակը ինձ կմատնէ արդեն ամեն բան. լուր առած է թե այդ օրն իսկ պիտի բացվին ոստիկանատուններուն դրկված գոց պահարանները:

Ա՛լ կասկած չկա: Աղետը անպայման պիտի պայթի այդ օրը:

Կոմիտաս նշմարած է զիս պատուհանն, ու ապակին կմատնահարե: Կբարձրանամ մոտը, հազիվ հաջողելով հուզումս զսպել: Կտեսնեմ որ հուզված է ինքն ալ:

— Գեշ երազ եմ տեսած, Սիրունի, կրսե.

այսօր անպատճառ բան մը պիտի պատահի...

Պահ մը կզգուշանամ լսածներս կետ առ կետ պատմել իրեն. բայց կրսեմ թե իմ ալ նախզգացումներս լավ չեն. հետո կամաց-կամաց կզգացնեմ իրեն թե աղետը շատ ալ հեռու չէ, ու լավ կըլլա որ ամեն մարդ իր բնակարանը փոխե:

— Թող պատահի՝ ինչ պիտի պատահի, կրսե Կոմիտաս՝ իրմե բաժնված պահուս:

Հոգեկան իր անդորրութիւնը կապշեցնե զիս: Քիչ անգամ մտաբերեմ կրնա այսքան քաջ ըլլալ փոթորիկը մոտեցած ատեն:

Ու երբ սանդուղներն կիջնեմ վար՝ փողոց նետվելու համար, կզգամ որ քիչ մը խաղաղած է հոգիս:

* *

Ընթերցող՝ դ, կանգ առնենք այստեղ:

Կավարտի հոս Կոմիտասի Գեթսեմանին, — շրջանը ուր ան սպասեց իր դահիճներուն, պաղարյուն ու քաջ:

Այս պահին կսկսի արդեն խաշին ահալոր ճամբան, ուրկե պիտի քալեր ան և ուր պիտի հետեւինք մենք ալ իրեն, ընթերցողին հետ մեկտեղ: Ու ընթերցողը թող ներե եթէ իր հոգիս խռովեմ ճամբան, իրեն պատմելու ատեն շարաշուք հանգրվանները ուրկե պիտի անցնինք Կոմիտասին հետ, սկսելով այդ դժնե օրն երբ ճիշտապէս ման եկավ դուռնե-դուռ, իր զոհերը շոկելու համար:

Եվ թող ընթերցողը այժմեան իսկ գիտնա թե ամեն անգամ որ մտաբերել կստիպվինք հուզումները զորս այդ օրն ապրեցանք՝ սարսուռ մը կհամակե մեզ: Տարիները չկրցան մեր հոգիներուն մեջ ցամաքեցնել անդհանքը, զոր ամեն մեկս զգացինք երբ դահիճը մեր դուռը զարկավ, ու մանավանդ այն պահուն՝ երբ ան իր զոհերը առջին ձգած սպանդանոց կը տաներ: Կես դար անցած է ահա այդ զարհուրելի գիշերն ի վեր, և սակայն միշտ ներկա են մեր հոգիներուն մեջ ուրվականները անմոռանալի այն մարդոց որոնք մաս կազմեցին եղբրական այդ կարավանին և որոնց հետ հայ ժողովուրդը կորսնցուց թանկագին մաս մը իր հոգիին:

Կոմիտաս մեկն էր այն հսկաններն զորս դահիճը խորտակել ուզեց խորտակելու համար հայ ժողովուրդը:

(Շարունակելի)